ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

—

Երեք գլխաւոր և աւելի հասարակական ու ընդհանուր նշանակութիւն ունեցող յոբելեաններ կան մեր առաջ. երեքն էլ նշանաւոր, երեքն էլ հարկաւոր, որոնք պէտք է կատարուեն ըստ արժանոյն։

Այդ յոբելեաններից մինը հայ տպագրութեան 400-ամեակն է. երկրորդը՝ «Մշակի» 40-ամեակը և երրորդը՝ Շուշուայ թեմ. դպրոցի 50-ամեակը։

Մենք համաձայն չենք՝ յոբելեաններ չպէտք է կատարել առարկողների հետ, որովհետև նրանց տօնելով ժողովուրդը հետաքրքրւում է իր ազգային պատմական անցեալով, իր նշանաւոր գործիչներով և համոզում է կազմում, որ պէտք է հասարակական գործիչներին—մեր մէջ տանջուած ու նահատակուած—պատուել, պաշտպանել և հասարակական գործն էլ խրախուսել։

Մեր վերը յիշած յոբելեանները միաժամանակ դրուած են հրապարակի վրայ. պէտք է նրանց կատարելու հերթը—չարքը այնպէս դասաւորել, որ մէկը միւսին արգելք չլինի, չխանգարէ։

Որովհետև այդ յոբելեանների կատարումը լոկ ձևի, անուան և տօնախմբութեան համար չէ, այլ նրա հետ կապուած է մի օգտաւէտ գործի, ձեռնարկութեան, մի բարի նպատակի յաւերժացումը։

Եւ որովհետև ծանրութիւնը կրողը և նիւթական օգնութիւն տուողը հայ ժողովուրդն է և այն էլ նրա մի որոշ, գիտակցող դասը. ուստի պէտք է չջլատել, չբաժանել նրան, պէտք է դիւրութիւն, միջոց տալ շունչ քաշելու՝ մասնակցելու համար բոլոր յոբելեաններին իր նիւթական օգնութեամբ—կամաւոր նուէրների օժանդակութեամբ։

Եւ մեր կարծիքով այդ յոբելեանների կատարելու չարքը պէտք է կազմել և սկսել ոչ ըստ նրանց համեմատական առաւելութեան և աւելի կարևորութեան, այլ որի արդիւնաբեր կատարման համար կարելի կը լինի շուտ պատրաստել, գլուխ բերել։

Մեր կարծիքով պէտք է առաջ, հէնց ներկայ տարում, կատարել «Մշակի» 40-ամեայ յոբելեանը, որի համար արդէն կազմուած է մասնաժողով և կամաւոր հանգանակութիւն—միմիայն նրա հրապարակութեան չարունակութիւնը—գոյութիւնը պաշտպանելու նպատակով—գործը սկսուած է։

Սակայն հայ տպագրութեան յոբելեանը, որը համազգային գործ է և նշանակութիւն ունի, որին մասնակցելու են ի սփիւռս աշխարհի ցրուած, գտնուած պանդուխտ հայութիւնը, ուստի և դրա համար հարկաւոր է նախ՝ կազմել մի կենդրոնական պատկառելի, հեղինակաւոր և բոլոր հայութեան վստահութիւնը վայելող Մասնաժողով, այլև հայութեան իւրաքանչիւր կենդրոնում ենթամասնաժողովներ, նոյնիսկ գաղթավայրերում՝ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ, որը մի հսկայ և բարդ գործ է և պահանջում է աւելի երկար ժամանակ, աւելի պատրաստութիւն, որպէսզի հնարաւոր լինի աւելի փառաւոր կատարել և ազգային մի խոշոր ձեռնարկութեամբ, մի գործով յաւերժացնել այդ նշանաւոր համազգային տօնը։

Ինչ վերաբերում է Շուշուայ թեմական հոգևոր դպրոցի 50-ամեակի յոբելեանին, որի նպատակն է բարւոքել նրա նիւթական դրութիւնը, ազատել նրան մուրալով իր գոյութիւնը քաշ տալուց, որը մի կարևոր գործ է՝ ի նկատի ունենալով Շուշուայ և նրա շրջակայ բազմաթիւ հայ ժողովրդի աղքատութիւնն ու յետամնացութիւնը, աւելի քան մասնաւոր բնաւորութիւն ունի։

Մեր կարծիքով, այդ մասին հոգալու պարտականութիւնը ընկնում է մեր շուշեցի եղբայրների վրայ։

Պատմական նշանաւոր Շուշին այժմ ունի այնպիսի զաւակներ, թէև ոչ Շուշում ապրող, որոնք մտաւոր և նիւթական մեծ կարողութեան—միլիօնների—տէր են, որոնցից շատերի Alma mater-ի մասին հոգալը, կրկնում ենք, նրանց գործն է։

ՉՈՐՍՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

1512—1912

Ե.

Մարկոսի տպարանը Զմիւռնիոյ կեդրոնի մէջ՝ դէպի Էջմիածին անցք մըն էր պարզապէս. Իրական շարժումը